

Գյուլերու պեճակահան ժամկետավարժական ինստիտուտը 80 տարեկան է

Կայացավ ԳՊՄԻ-ի խորհրդի 2014թ.-ի առաջին նիստը



Փետրվարի 8-ին Գյուլերու Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցավ բուհի խորհրդի նիստը: Օրակարգի առաջին հարցը բուհի խորհրդի նախագահի ընտրությունն էր, որի արդյունքում բաց քվեարկությամբ խորհրդի անդամները նախագահի ընտրեցին Շիրակի մարզպետ Ֆելիքս Յուլակյանին:

Հաշվետու զեկույզները ներկայացրեց ԳՊՄԻ-ի ռեկտոր Վարդեան Գրիգորյանը՝ նախ խոսելով 2013-2014 ուսումնական տարվա գործունեության մասին, նշելով, որ Շիրակի մայր բուհը, հավատարիմ մնալով իր առաքելությանը, հետևել է որոշակի նպատակների, մասնավորապես, իրականացրել որակի մշակույթի ձևավորմանն ուղղված քայլեր, ապահովել հարափոփոխ միջավայրին, ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան փոխանցելի գիտելիքներ և հմտություններ ունեցող շրջանավարտների պատրաստում, նպաստել տրվող որակավորման աստիճանների մրցունակությանը և

մատուցվող ծառայությունների թափանցիկությանը՝ բարձրացնելով բուհի գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը: Հաշվետու տարում ֆակուլտետների քանակը բուհում նույնն է մնացել՝ 6, իսկ ամբիոնների ու սեկտորների միավորում և վերանվանում կատարվել է. նախորդ տարվա 28 ամբիոնի և 2 սեկտորի փոխարեն բուհն այսօր ունի 21

մասնագիտական ամբիոն: ԳՊՄԻ-ի կառուցվածքային միավորներ են նաև միջին մասնագիտական կրթության բաժինը և ավագ դպրոցը:

Վերակազմավորվել, լուծարվել կամ ստեղծվել են նոր կառուցվածքային ստորաբաժանումներ: Բուհի ուսումնական մասը վերակազմավորվել է ուսումնամեթոդական վարչության, հիմնվել է բուհ-գործատու համագործակցության կենտրոնը, ասպիրանտուրայի բաժինը վերանվանվել է լրացուցիչ եւ հետբուհական կրթության բաժին, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողական համակազմի շարժունությունն ապահովելու նպատակով ստեղծվել է լեզուների ուսուցման կենտրոնը:

Կարևորելով իր տրամադրած կրթական, գիտական և այլ ծառայությունների համար պետության և հասարակության առջև հաշվետվողականությունը, ինչպես նաև իր գործունեության մասին տե-

ղեկավարության հասանելիության և թափանցիկության ապահովումը՝ հաշվետու տարում բուհում հիմնվել է հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինը: Մինչև ուսումնական տարվա վերջ կավարտվեն նաև բուհի կայքի /www.gspi.am/ ներբեռնման աշխատանքները: իսկ Որակի ապահովման կենտրոնի աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու համար ստեղծվել են որակի ապահովման ֆակուլտետային կենտրոններ: Հաշվետու ժամանակաշրջանում բուհի ամենակարևոր ձեռքբերումներից է ԳՊՄԻ-ի «Գիտական տեղեկագիր» պարբերականի հիմնումը, որի երկու համարները Ա եւ Բ պրակներով արդեն տպագրված են՝ 45 հոդվածներով:

Հաշվետու տարում իրականացվել են 8 միջազգային ծրագրեր, պրոֆեսորադասախոսական կազմի 2 վերապատ-



Կայացավ ԳՊՄԻ-ի խորհրդի 2014թ.-ի առաջին նիստը

← րաստումներ: Իրակա-
նացվող ծրագրերի
ուղղությունները և նպատակ-
ներն իրարից տարբեր են և
ընդգրկում են այն հիմնական
ուղղությունները, որոնք այսօր հռ-
չակված են Բոլոնիայի գոր-
ծընթացի գործողությունների
գլխավոր ուղղություններ:

**Օրակարգի հաջորդ կետը
բուհի զարգացման ռազմա-
վարական քառամյա ծրագրի
հաստատումն էր՝ 2014-2018
թվականների համար:**

Ռեկտորը նախ նշեց, որ
մարզի ամենամեծ կրթական,
գիտական և մշակութային

հաստատության առաքելու-
թյունն ազգային աշխատաշ-
ուկայի պահանջներին համա-
պատասխան կարողություն-
ներով և անհրաժեշտ գիտե-
լիքներով օժտված մասնա-
գետների պատրաստումն է
բակալավորի, մագիստրոսի և
հետազոտողի որակավորում-
ներով՝ մասնագիտական կր-
թական ծրագրերի իրակա-
նացման միջոցով, տեսլական-
ով՝ համադրել ինչպես ու-
սուցման ավանդական մեթոդ-
ների վերանայված ու լրամ-
շակված տարբերակները,
այնպես էլ ժամանակակից կր-



թական տեխնոլոգիաների,
դասավանդման մեթոդիկանե-
րի, նորաստեղծության /իննո-
վացիոն/ հնարավորություն-
ները՝ կիրառելով ու շարունա-
կաբար զարգացնելով կրթու-

թյան ու դաստիարակության
արդիական մեթոդները:

**Խորհրդի նիստում հաս-
տատվեց նաև ԳՊՄԻ-ի 2014
թվականի եկամուտների և
ծախսերի նախահաշիվը:**



Հյուր գինվորներին ...

Հունվարի 28-ին լրացավ Հայոց բա-
նակի կազմավորման 22-ամյակը, բա-
նակ, որ հասել է կայունության և հզորու-
թյան, որ պատրաստ է գիշեր ու զօր հս-
կել հայ մանկան խաղաղությունը: Հա-
մայն հայության ու հատկապես զինվորա-
կան ծառայության մեջ գտնվողների հա-
մար օրն առավել տոնական էր: Իսկ
Պաշտպանության նախարարության՝
Գյումրիում տեղակայված՝ հակատան-
կային զորամասի զինվորների համար
մեր հպարտության օրն առավել հիշար-
ժան դարձրեցին Գյումրու պետական
մանկավարժական իսնտիտուտի հենա-
կետային ավագ դպրոցի սաները: Հայրե-
նասիրական երգերը, ազգային քոչարին
և մեծերի խոսքերն անմոռանալի դարձ-
րին տոնական առավոտը: Մոնթեի, Թա-
թուլ Կրպեյանի, Վազգեն Սարգսյանի
ոգիները կարծես պարուրել էին հավաք-
վածներին քաջությամբ և նրանց մեջ
արթնացրել հայրենասիրություն և անձն-

վիրություն: Յուրաքանչյուր զինվոր մի
պահ կտրվելով իր առօրյայից անմիջա-
կան մասնակիցը դարձավ տոնախմբու-
թյանը:

Ձինդեկի Հարություն Հովհաննիսյանի
ղեկավարությամբ՝ զորամասի դահլիճը
մի քանի ժամով լցվեց մարտական ու
մարտիկի երգերով, հայոց բանակի ան-
ցած դժվարին ուղու ու արյան գնով ձեռք
բերված հաղթանակների մասին հիշա-
տակումներով:

Մենք՝ հայերս, ծնված օրվանից զին-
վոր ենք: Ողջ հայ ազգի տոնն է այս տո-
նը, իսկ հակառակորդին զսպողը միայն
մեր մարտունակության առկայությունն
է,-չնորհակալություն հայտնելով նախա-
ծեռնության հեղինակներին՝ ամփոփեց
զորամասի հրամատար գնդապետ Գաս-
պարյանը:

«Այն ազգը, որը չի կերակրում իր բա-
նակին՝ կերակրում է թշնամու բանակին»-
այս կարգախոսով առաջնորդվելով՝ աշ-

ակերտներն իրենց սեփական միջոցնե-
րով զորամասի գրադարանին նվիրեցին
գրքեր: Ձինդեկի ուղեկցությամբ աշա-
կերտները ծանոթացան նաև զինվորնե-
րի առօրյային, նրանց խիզախության
դարբնոցին:

Կազմակերպված մշտադառնալից մաս-
նակցելու համար ԳՊՄԻ-ի հենակետա-
յին ավագ դպրոցի տնօրենի պատվոգրե-
րով պարգևատրվեցին միջոցառման բո-
լոր մասնակից աշակերտները: Իսկ հա-
յոց բանակի զինվորի ցանկությունը այս
էլ մյուս բոլոր զորամասերում մեկն է՝
խաղաղ սահմաններ ու անխառն երկինք
իրենց հայրենիքին: Իսկ վերջում հավա-
տիացումն է՝ թշնամու ցանկացած հար-
վածին համարժեք պատասխան ենք տա-
լու:

Վիդա Կիրակոսյան, Աշոտ Թադևոս-
յան, ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 10-րդ դա-
սարանի աշակերտներ

«Մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման միջազգայնացման եւ համադրելիության» (PICQA) ծրագրի արդյունքների ամփոփումը ԳՊՄԻ-ում

Փետրվարի 12-ին Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունենացավ «Մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման միջազգայնացման եւ համադրելիության» (PICQA) դրամաշնորհային ծրագրի փորձի ներկայացում եւ արդյունքների քննարկում: Ջեկույցներով հանդես եկան գործընկեր հանդիսացող եվրոպական եւ հայաստանյան բուհերի ներկայացուցիչները՝ խոսելով ծրագրի արդյունքների եւ բուհերի ձեռքբերումների մասին:

Հայաստանյան եւ վրաստանյան բուհերի կրթության որակները եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելուն միտված դրամաշնորհային ծրագրի ավարտին ձեռքբերումների մասին խոսելիս ընդհանուր առմամբ փորձագետները բարձր գնահատեցին ծրագրի արդյունավետությունը՝ տարածաշրջանի բուհերում որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների շնորհիվ զարգացումները բնութագրելով տեսանելի:

Գերմանիայի բնական գիտությունների, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի ոլորտում որակի ապահովման կենտրոնի (ASIIN) ներկայացուցիչ Բըրգիթ Հանի խոսքերով մեծ դրական տեղաշարժ է գրանցվել ծրագրի մասնակից բոլոր համալսարաններում: Այն նպատակները, որոնք հետապնդվել են ծրագրի ղեկավարները, այլևս իրականություն են, սպասելիքները՝ գերազանցված: Ըստ փորձագետի՝ տեղայնացումը հայաստանյան բուհերում տեղի է ունենում ոչ թե մեխանիկորեն, այլ հարմարեցնելով մեր կրթական պահանջներին, եթարկելով



փոփոխությունների եւ նոր միայն որդեգրելով որպես սկզբունքներ:

-Ինձ ոգեւորում է այն փաստը, որ բոլոր ներգրավված են որակի ապահովման գործընթացում: Խորհրդային տարի-

ներից հետո բոլոր բուհերին տրվել է ինքնուրույն առաջ շարժվելու հնարավորություն, ինչը հոյակապ հնարավորություն է տարածաշրջանի բուհերի համար՝ ինքնուրույն մշակելու այն չափանիշները, որոնցով պատրաստվում են առաջնորդվել-նշեց Գերմանիայի բնական գիտությունների, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի ոլորտում որակի ապահովման կենտրոնի (ASIIN) ներկայացուցիչ Գյունտեր Յերտելը:

Մասնագիտության կրթական ծրագրում առարկայի նկարագրի կազմման գործընթացը ներկայացրեց ըստ Ալիկանտեի համալսարանի մոդելի, հավաքվածներին Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի գիտության և արտաքին կապերի զծով պրոռեկտոր Անահիտ Ֆարմանյանը: Շիրակի մայր բուհում որակի ապահովման կենտրոնի փոխնախագահ Դովհաննես Խորիկյանը խոսեց որակի ապահովման մոդելների և շահակիցների մասին՝ կանգ առնելով այն հիմնախնդիրների վրա, որոնք ծառայած են բուհի առջեւ:

-Կարելորն այն է, որ մեր պրոֆեսորադասախոսական անձնակազմը որակի մշակույթի ձեւավորման անհրաժեշտությունը զգում է՝ անկախ բազմաթիվ դժվարություններից ու խոչընդոտներից, ինչն անչափ կարեւոր է որակի ապահովումը մեր բուհում իրականացնելու համար: Մեր ռազամավարական ծրագիրը խիստ իրատեսական է, եւ հետագա 5 տարիների ընթացքում մենք կարող ենք հստակ տեսնել որակի ապահովման քաղաքականության ապահովման արդյունքները մեր բուհում,-մեզ հետ զրույցում նշեց Խորիկյանը:

Լիլիթ Թովմասյան

Ճանաչի՛ր քո իրավունքներն ու պարտականությունները

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2011 թ. նոյեմբերի 17- ի թիվ 1242-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ (ԱԶԱՏՄԱՆ) ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր (բակալավրի և մագիստրոսի) իրականացնող հաստատություններում (այսուհետև՝ բուհեր) ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման ընդհանուր պայմանները:

2. Ուսումնական պլանների փոփոխության պատճառով առաջացած առարկայական տարբերությունները համարվում են ակադեմիական պարտքեր, որոնք ուսանողը պետք է հանձնի ռեկտորի հրամանով հաստատված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

3. Առարկայական տարբերություն է համարվում ուսումնառած պլանում բացակայող առարկան կամ որևէ առարկայից 25 տոկոս և ավելի կրեդիտների տարբերությունը:

4. Ակադեմիական անբավարար առաջադիմություն է համարվում քննաշրջանում երեք և ավելի առարկաներից կամ մեկ առարկայից երեք անգամ «անբավարար» գնահատական ստանալը:

5. Բուհի ռեկտորը վերականգնվող ուսանողին ազատում է նախկինում ուսումնասիրած և համապատասխան կրեդիտներ հավաքած առանձին առարկաների ուսումնական պարապմունքներից: Ուսանողը պարտավոր է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է՝ ըստ տվյալ բուհում տվյալ մասնագիտության համար գործող մեկ կրեդիտի արժեքի:

II. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄ, ԱԶԱՏՈՒՄ

6. Ուսանողը հեռացվում է բուհից.

1. ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում (բացառությամբ սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքերի),

2. բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքերում,

3. բուհի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում:

7. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքով ընդունված, ակալայն բուհից հեռացված ուսանողները զրկվում են տարկետման իրավունքից:

8. Ուսանողը ազատվում է բուհից.

1. իր դիմումի համաձայն,

2. այլ բուհ տեղափոխվելու դեպքում:

9. Բուհից ուսանողի ազատման հրաման իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման համաձայն սույն Կարգի 6-րդ կետով նախատեսված դեպքերի:

10. Ուսանողի ուսումնառությունն ընդհատվում է.

1. ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում,

2. առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքում,

3. հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում:

11. Քննաշրջանի ընթացքում քննություններին չներկայացած ուսանողներին թույլատրվում է մինչև տվյալ կիսամյակի երրորդ շաբաթվա ավարտն անհատական ժամանակացույցով հանձնել ակադեմիական պարտքերը:

12. Ակադեմիական պարտքերի անվճար հիմունքներով մարումն իրականացվում է ռեկտորի հրամանով ձևավորված քննական հանձնաժողովներում: Ակադեմիական պարտքերի մարման վերջնաժամկետ է սահմանվում ընթացիկ կիսամյակի երրորդ շաբաթվա վերջը:

13. Սույն կարգի 6-րդ կետի 1. ենթակետով նախատեսված դեպքում բուհից հեռացման հրամանները տրվում են քննաշրջանի ակադեմիական պարտքերի մարման արդյունքների ամփոփումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին ուսանողը նախապես տեղեկացվում է:

14. Բուհից հեռացված (ազատված) արական սեռի ուսանողների վերաբերյալ հրամանները 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են համապատասխան զինկոմիսարիատներ:

15. Բուհից հեռացման (ազատման) դեպքում ուսանողի դիմումի համաձայն՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում նրան տրվում է հեռացման (ազատման) հրամանի պատճենը, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը: Բուհի կողմից հաստատված ավարտական վկայականի պատճենը պահվում է ուսանողի գործում:

16. Ընթացիկ անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունված ուսանողների, իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը՝ վե-

←4 րահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք:

17. Սույն կարգի 10-րդ կետի համաձայն ուսումնառությունն ընդհատած ուսանողները շարունակում են ուսանողական իրավունքները մինչև ուսումնառության ընդհատումն ունեցած կարգավիճակի պահպանմամբ:

III. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

18. Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է՝ սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից:

19. Ուսանողական իրավունքների վերականգնման դիմումները ներկայացվում են կիսամյակների ուսումնական պարայմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում, իսկ հեռակա համակարգում՝ կիսամյակների ուսումնական պարայմունքներին նախորդող երեք շաբաթների ընթացքում: Վերականգնման դիմումին կցվում է ակադեմիական տեղեկանքը կամ ստուգման գրքույկի պատճենը:

20. Բուհերից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են ընդունող բուհի ռեկտորի հրամանով՝ ուսուցման բոլոր ձևերում:

21. Առաջացած առարկայական տարբերությունների և ակադեմիական պարտքերի մարման համար բուհի ռեկտորի կողմից սահմանվում է ժամկետ, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

22. Ձորակոչվելու կապակցությամբ և առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդի ձևակերպմամբ ուսումնառությունն ընդհատած ուսանողները ուսումնառությունը շարունակում են այն պահից, որից այն ընդհատել են՝ անկախ առաջացած ծրագրային տարբերություններից:

23. Վճարովի ուսուցման համակարգում ուսանողների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո:

24. Բուհից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են այն կիսամյակում, որից նրանք հեռացվել (ազատվել) են, եթե վերականգնման պահին առարկայական անհամապատասխանություններով պայմանավորված կրե-

դիտների գումարային քանակը չի գերազանցում 20 կրեդիտը: 20 կրեդիտը գերազանցելու դեպքում ուսանողին առաջարկվում է վերականգնվել ավելի ցածր կիսամյակում, որի համար առարկայական անհամապատասխանությունների սույն կետում նշված պահանջը բավարարվում է, բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակի:

25. Բուհից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են տվյալ մասնագիտության համար լիազոր մարմնի կողմից սահմանված տեղերի սահմաններում:

26. Սույն կարգի 14-րդ կետով՝ ուսումնառությունն ընդհատած ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքներն այն պահից, երբ ընդհատել են այն, անկախ լիազոր մարմնի կողմից սահմանված տեղերի քանակից և առաջացած ծրագրային տարբերություններից:

27. Բուհից հեռացված ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքները առնվազն 1 կիսամյակ հետո:

28. Բուհերից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են վճարովի սկզբունքով: Վճարովի սկզբունքով վերականգնված ուսանողները կարող են ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգի» համաձայն մասնակցել փոխատրման գործընթացին՝ առնվազն մեկ ուսումնական տարի ուսանելուց հետո:

28. Բուհերից հեռացված (ազատված) ուսանողները կարող են վերականգնել ուսանողական իրավունքները պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում:

34. Անվճար սկզբունքով ուսումը կարող են շարունակել ՀՀ օրենքով սահմանված իրավունքներից օգտվող անձինք:

Աղբյուրը՝ ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայք

Նոր հնարավորություններ գյումրեցի ուսանողների համար

Ավելի քան երկու տասնամյակ Հայաստանում գործունեություն ծավալող «ԱՅՍԵԿ-Հայաստան» հասարակական կազմակերպության անդամները փետրվարի 8-ին և 9-ին հյուրընկալվեցին Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում: «ԱՅՍԵԿ» միջազգային ուսանողական կազմակերպությունը միտված է համախմբելու այն ուսանողներին և շրջանավարտներին, ովքեր հետաքրքրված են համաշխարհային խնդիրներով, առաջնորդությամբ և կառավարմամբ: Կազմակերպությունը ղեկավարվում է մինչև 30 տարեկան երիտասարդների կողմից և հիմնական նպատակն է ապահովել երիտասարդների մասնագիտական զարգացումը, կերտել առաջնորդներ, մրցունակ մասնագետներ:



Մանկավարժականցիների հետ հան-

դիպման նպատակը մոտ կես տարի առաջ հիմնադրված «ԱՅՍԵԿ-Գյումրի» կազմակերպության նոր անդամների հետ ծանոթանալն ու մասնագիտական գիտելիքներ փոխանակելն էր: Միջոցառումների մեկնարկն ազդարարում էր «Քայլ առաջ» համաժողովը: «ԱՅՍԵԿ»-ի Գյումրու մասնաճյուղի անդամներն առաջիկայում ուսանողների համար կազմակերպվելու են մի շարք կրթական միջոցառումներ: «ԱՅՍԵԿ»-ն իրականացնում է նաև միջազգային փոխանակման ծրագրեր, որոնց միջոցով երիտասարդները կարող են աշխատանքային վերապատրաստում անցնել՝ աշխատելով և իրենց մասնագիտական գիտելիքները զարգացնելով արտերկրում:

Լիդա Այվազյան

Կենդանաթերապիան որպես հոգեբանական աջակցության եղանակ



ԳՊՄԻ-ի ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվող ուսանողական գիտական նստաշրջաններին մշտապես մասնակցում են նաև մանկավարժական և ուսանողները: Կրթական-տեղեկատվական ամսաթերթի համարներում այսուհետև ծանոթացեք նաև մեր ուսանողների գիտական հոդվածներին:

Կենդանիների միջոցով թերապիան կամ կենդանաթերապիան, հանդիսանալով ավանդական թերապիայի այլընտրանքային ձևերից մեկը, առաջարկում է բուժման ժամանակակից եղանակներ ու մեթոդներ հոգեբանական խնդիրներ ունեցող անձանց, հատկապես երեխաների համար:

Ամերիկացի և եվրոպացի հոգեբանների (Ջ. Բոուլբի, Գ. Ֆ Մելսոն, Բ. Լա Ջո) կողմից կատարված հետազոտությունները վկայում են այն մասին, որ կենդանիները հեշտացնում են կյանքը, լավացնում մարդկանց ինքնագացողությունը, տրամադրությունը, շեղում նրանց առօրյա հոգսերից: Մասնավորապես, կենդանիներ պահող մարդկանց մոտ ավելի բարձր է ինքնագնահատականը, վեր-

ջիններս քիչ են տառապում միայնությունից, վախերից, ավելի բաց են և անկեղծ:

Շատ դեպքերում կենդանիները կարող են հանդես գալ որպես «սուրոգատներ»: Այսինքն, նրանք կարող են լրացնել ծնողի, ընկերոջ, հարազատի սիրո և ջերմության պակասը: Ծնողների բաժանությունը, ընտանիքում տիրող վեճերն ու լարված մթնոլորտն ակամայից երեխային դարձնում են լուռ և ինքնամոխի: Կենդանիների ընկերակցությունն օգնում է մարդկանց հեշտությամբ հաղթահարել դժվարությունները և դուրս գալ ճգնաժամից:

Բոլոր տարիքային ճգնաժամերից ամենաբուռն արտահայտվողը դեռահասության ճգնաժամն է, որը բնութագրվում է հետևյալ բացասական ախտանշաններով՝ տագնապայնություն, ագրեսիվություն, լարվածություն, նեգատիվիզմ: Կենդանաթերապիան ուղղակի կամ անուղղակի ձևով կարող է օգնել դեռահասներին՝ հեշտությամբ ազատվելու վերը նշված ախտանշաններից:

Դեռահասության շրջանում երեխաները շատ հաճախ ունենում են կոնֆլիկտներ ընկերների, ընտանիքի անդամների և հատկապես ծնողների հետ: Վերջիններս դադարում են վստահել մարդկանց, շփվել ընկերների հետ: Ատելով մարդկանց՝ նրանք սիրում ու վստահում են կենդանիներին, քանի որ այս փոքրիկ եակներն իրենց երբեք չեն նախատում կամ քննադատում:

Թերապիաները կարող են կախված լինել միջավայրից, կենդանիների տեսակից և հիվանդությունների տեսակից: Ըստ այդմ էլ տարբերում են կենդանաթերապիայի հետևյալ տեսակները՝

- **թերապիա ձիերի միջոցով (հիպոթերապիա),**
- **թերապիա ջրային կենդանիների միջոցով (ձուկ, թուփակ),**



Ֆին, փոկ),

- **թերապիա ընտանի կենդանիների միջոցով (շուն, կատու, ճագար, թութակ),**
- **թերապիա գյուղատնտեսական կենդանիների միջոցով (սագ, բաղ, ոչխար, կով, այծ) և այլն:**

Ուսումնասիրելով կենդանաթերապիայի և կենդանիների ընկերակցության այս դրական հատկանիշները՝ գերմանացի հոգեբան և հոգեբույժ Էրիկ Էրիկսոնը (1902-1994) առանձնացրել է նաև մարդկանց այն հատկանիշները,

որոնք ձևավորվում են կենդանաթերապիայի արդյունքում՝

- վստահություն շրջապատի հանդեպ և ինքնավստահություն,
- սեր և հարգանք մերձավորների հանդեպ,
- պատասխանատվության զգացում,
- նպատակալացություն,
- խղճի խայթի զգացում,
- հաստատում կամք,
- նվիրվածություն,
- խոհեմություն,
- ինքնուրույնություն և այլն:

Կենդանաթերապիան որպես հոգեբանական աջակցության եղանակ

◀6 Խոսելով կենդանիների թերապևտիկ հատկանիշների մասին՝ հարկ է առանձնացնել շների, կատուների, ոչխարների, դելֆինների և ձիերի բուժիչ հատկությունները:

Ամերիկյան և եվրոպական մի շարք երկրներում կատարված փորձերը վկայում են այն մասին, որ **շների ընկերակցությունը կարևոր է հատկապես սրտային և հիպերտոնիկ հիվանդների համար:** Երկար ժամանակ շիվելով շների հետ՝ կարգավորվում է նրանց զարկերակային ճնշումը, նվազում հաճախասրտությունը: Իսկ երեխաների մոտ նվազում է վախի և տագնապի զգացումը: Հայտնի է նաև, որ շները լիզելով բուժում են վերքերն ու մաշկային վարակիչ հիվանդությունների մի քանի տեսակներ:

Շատերին է զարմացնում կատուների բուժիչ հատկությունը: Մի շարք գիտնականներ պարզել են, որ **կատուները, հատկապես նրանց ձագուկները կարող են 40 տոկոսով նվազեցնել սրտամկանի ինֆարկտի վտանգը, հանգստացնել ցավը, խթանել ոսկորների աճը, կարգավորել զարկերակային ճնշումն ու շնչառությունը:** Իսկ նրանց մոռոցը հանգստացնում է մարդկանց նյարդերն ու նվազեցնում ջղաձգումները:

Ոչխարների բուժիչ հատկությունների մասին շատ քիչ է ակնարկվում թերապևտիկ գրականության մեջ: **Ոչխարի բուրդն իր մեջ կրում է հատուկ էներգիա, որի շնորհիվ բուժվում են շնչառական և հոդանկանային հիվանդությունները:** Շոյելով ոչխարներին՝ նրանց էներգիան փոխանցվում է մեզ, և մեզանից վանվում է մեր մեջ կուտակված ամբողջ բացասական էներգիան:

Ի՞նչ կախարդական ուժ է թաքնված այս սակայական և բարի կենդանիների՝ դելֆինների մեջ: Մի շարք զարգացած երկրներում գործում են դելֆինարիումներ, որտեղ անցկաց-

վում են դելֆինների միջոցով թերապիաներ: Այս թերապիաներին հաճախում են հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաները: Բարձր է նաև աուտիզմով և մանկական ուղեղային կաթվածով երեխաների մասնակցությունը:

Հիպպոթերապիան երեխաների կողմից ընկալվում է որպես ոչ թե բուժման միջոց, այլ հաճելի և միաժամանակ դժվարին փորձություն: Ձիերի ընկերակցությունը նրանց մոտ ձևավորում է այնպիսի հմտություններ, ինչպիսիք են հավասարակշռության պահպանումը, ինքնավստահությունը, հաղորդակցումը, պատասխանատվության զգացումը, կարեկցելու ունակությունը և այլն:

Իսկ որքան՞վ է արդիական կենդանաթերապիան Հայաստանում, հատկապես Գյումրիում, որտեղ 1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով մեծ բացասական «հեղափոխություն» կատարվեց մարդկանց ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեկան աշխարհում:

Պարզելու նպատակով կատարել ենք հետազոտություններ 8-12 տարեկան հարյուր դեռահասների շրջանում, որի ժամանակ օգտագործել ենք հիմնականում դիտման, գրույցի, թեստավորման մեթոդները:

Հետազոտությունները ցույց են տվել, որ Գյումրիում հարցվողների ընդամենը 60%-ն է լսել կենդանաթերապիայի մասին: Իսկ այն հարցին, թե որ կենդանիներն են մասնակցում թերապիային, 15%-ը մշել է շների, 30%-ը՝ կատուներին, 15%-ը՝ ձիերին, իսկ մնացած 40%-ը համոզված է, որ համարյա բոլոր կենդանիները կարող են ունենալ թերապևտիկ ազդեցություն:

Լուսինե Հարությունյան
Հոգեբանություն, մագ.
2-րդ կուրս
Հոդվածն հանձնված է տպագրության



Մեկ տարի ԱՄՆ-ում անցկացնելու հնավարությունն՝ բակալավրի ուսանողների համար



Օրերս Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում պրոֆեսորադասական կազմի հետ հանդիպեցին Միջազգային հետազոտությունների և փոխանակման խորհուրդ (Այռեքս) միջազգային կազմակերպության ներկայացուցիչները, նպատակով՝ առաջարկել մանկավարժական ուսանողներին մասնակցել 2014-2015 թթ.-ին Եվրասիայի և Միջին Ասիայի ուսանողների

փոխանակման համաշխարհային Գլոբալ ՅՈՒԳՐԵԴ ծրագրին: Ծրագրին կարող են մասնակցել բակալավրի երկրորդ և երրորդ կուրսի ուսանողները՝ անգլերենի պարտադիր իմացությամբ: Ինչպես տեղեկացրեց «Այռեքս –Յայաստան» գրասենյակի ներկայացուցիչ Սոնա Մատինյանը, հայցադիմումները լրացնելուց եւ քննությունների փուլն անցնելուց հետո ընտրված ուսանողները մեկ ուսումնական կիսամյակ սովորում են ԱՄՆ-ի համալսարաններում կամ համայնքային քոլեջներում, ինչն էլ հնարավորություն է տալիս ընդլայնել Ամերիկայի Միացյալ Նահանգների մասին իրենց պատկերացումների շրջանակը, ներկայացնել իրենց երկրների պատմությունն ու մշակույթը: Գլոբալ ՅՈՒԳՐԵԴ ծրագրի պահանջների համաձայն մասնակիցները ուսումը շարունակում են իրենց հայրենիքում, փոխանցում են ԱՄՆ-ում ձեռք բերած գիտելիքները հայրենակիցներին ու նպաստում իրենց համայնքների զարգացմանը:

2014-2015 ուսումնական տարվա համար ՅՈՒԳՐԵԴ ծրագրի մասնակիցներին կիրառվել են 39 հաստատություններ ԱՄՆ-ի 26 նահանգներում:

Եվրասիայի և Միջին Ասիայի ուսանողների փոխանակման համաշխարհային ծրագիրը ԱՄՆ-ի պետական քարտուղարության կրթական և

մշակութային հարցերի բաժնի ծրագրերից է: Ի դեպ՝ Եվրասիայի և Միջին Ասիայի ուսանողների փոխանակման համաշխարհային Գլոբալ ՅՈՒԳՐԵԴ ծրագրին նախորդ տարին մասնակցել են նաեւ Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողները: Այս տարի եւս Շիրակի մայր բուհից միջազգային կազմակերպությունը դիմորդներ կուցենա: Վերջիններիս թիվն ավելի մեծ կլինի, եթե անգլերենի իմացությամբ օտար լեզվի ֆակուլտետի ուսանողներին չզիջեին մյուս մասնագիտություններով սովորողները:

Ուսանողների դիմումներին ծրագրի համակարգողները կսպասեն մինչեւ ձմռան վերջին օրը: Իսկ թե Շիրակի մայր բուհից հատկապես քանի ուսանող մեկ ուսումնական տարի կանցկացնի ԱՄՆ-ում, պարզ կդառնա միայն քննությունների փուլի ավարտից հետո:

Լիլիթ Թովմասյան

E-learning-ը ԳՊՄԻ-ում

2011-2014 թթ.-ին Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության ֆինանսավորմամբ «GIZ» կազմակերպությունն ու Հայաստանի էլեկտրոնային ուսուցման ազգային ցանցը համատեղ իրականացնում են «Էլեկտրոնային ուսուցման ինստիտուցիոնալ կառուցում և մարդկային ռեսուրսների զարգացում և Հարավային Կովկասում» ծրագիրը նպատակով՝ Հարավային Կովկասի կրթական կազմակերպություններում կառուցել և զարգացնել ինստիտուցիոնալ և տարածաշրջանային կարողությունները էլեկտրոնային ուսուցումը ներդնելու և իրականացնելու համար:

Ծրագրին մասնակցել է նաեւ Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի թիմը: Մասնակիցների զնահատմամբ դասընթացն հնարավորություն է

տվել ծանոթանալ էլեկտրոնային ուսուցման առանձնահատկություններին, մասնավորեպես, ներկայացվելիք նյութերը էլ ավելի մատչելի ու բովանդակային ամբողջացման մեջ մատուցելու հնտություններին:

Իրավունք- պարտականություններից մինչեւ քնությունների ժամանակացույց, ուսուցման կազմակերպման բաղադրիչներ ու առհասարակ դասընթացի կազմակերպման ողջ գործընթացն այսուհետ ուսանողին հասանալի է և վերահսկելի՝ բուհի ուսուցման գործընթացի ուղեցույցի՝ էլեկտրոնային դասընթացի շնորհիվ, որն, ի դեպ, հայաստանյան բուհերի մեջ առաջինն է:

Ուսուցման գործընթացի էլեկտրոնային ուղեցույցը տեղադրված է բուհի մի քանի համակարգչային լսարանների համակարգիչներ վրա, օրերս ուղեցույցն հասանելի կլինի նաեւ ընթերցասրահի բոլոր 45 համակարգիչներով՝ մի կողմից վերահսկելով ուսուցման ողջ գործընթացը, մյուս կողմից դառնալով բու-



հում թափանցիկ գործունեության հիմնաքարերից մեկը: Մանկավարժականի թիմի անդամները վերապատրաստում անցնելուց եւ էլեկտրոնային ուսուցման մասնագետի վկայականներ ստանալուց հետո ուղղակիորեն իրենց վրա են կրում նաեւ գործընկեր աշխատակիցներին՝ ձեռք բերած հնտությունները փոխանցելու պատասխանատվությունը:

Ինչպես ծրագրին մասնակից մյուս բուհում, Գյումրու մանկավարժականում եւս, ծրագրի վերջնական նպատակն է էլեկտրոնային ուսուցման ցանկացած ձևի զարգացումն ու օժանդակումը:

Տուրիզմի զարգացումը՝ առաջնարհերթություն տարածաշրջանում. քննարկում են միջազգային ծրագրի փորձագետները



Նի հեղինակությամբ պատրաստ են միջազգային դասագրքի երեք գլուխները, գրքի շնորհանդեսը տեղի կունենա այս տարվա հունիսին, Գերմանիայում՝ Ուորմսի կիրառական գիտությունների համալսարանում:

Ծրագրի շրջանակներում բուհի աշխատակիցները կանցնեն նաև վերապատրաստում՝ նոր առաջարկող առարկաների դասավանդմանը պատրաստվելու նպատակով:

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում կայացած հանդիպումը հերթական մոնիտորինգ այց էր եվրոպական գործընկերների կողմից՝ գնահատելու մինչ այժմ կատարված աշխատանքների արդյունավետությունը: Եռամյա ծրագրի 1.5 տարվա աշխատանքը ծրագրի համակարգողները գնահատեցին արդյունավետ՝ ակնկալելով նույնքան արդյունավետ ավարտ:

Փետրվարի 20-ին Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում «Տեմպուս» ծրագրի շրջանակներում հանդիպում էր միջազգային SuToMa ծրագրի համակարգողների հետ: «Կայուն տուրիզմի կառավարման ոլորտում միջազգային բակալավրական եւ մագիստրոսական ծրագրերի նոր մոդուլների մշակում» /SuToMa/ ծրագիրը մեկնարկել է 2012-ին՝ մասնակցությամբ Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի 30 համալսարանների, ձեռնարկությունների եւ հասարակական կազմակերպությունների: Ծրագրի եվրոպական գործընկեր-

ներն են Գերմանիայի, Լատվիայի եւ Իռլանդիայի համալսարանները: Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտը հայաստանյան 8 գործընկեր կազմակերպություններից մեկն է, որտեղ ոլորտում Բոլոնիայի չափանիշներին համապատասխան մշակված առարկաներ ունենալու ուղղությամբ տարվող աշխատանքներն արդեն տեսանելի են. Շիրակի մայր բուհում «Կայուն տուրիզմի կառավարման ոլորտում միջազգային բակալավրական եւ մագիստրոսական ծրագրերի նոր մոդուլների մշակում» ծրագրի ղեկավար Լեւոն Սարտիրոսյա-

Լիլիթ Թովմասյան



Հայրենասիրությունն ու ազգային դաստիարակությունը ԳՊՄԻ-ի միջին մասնագիտական բաժնում եւ ավագ դպրոցում կրթության կարեւոր բաղադրիչներ են: Այս նպատակին ծառայալու են նաեւ կազմակերպված միջոցառումները, հեր-

Նշվեց Անդրանիկ Օզանյանի 149-ամյակը

թականը բաց դասն էր՝ նվիրված Անդրանիկ Օզանյանի 149-ամյակին:

Հայրենասիրության ոգով հագեցած բաց դասը վարում էր բանաստեղծ Սամվել Մարգարյանը: Ջորավարի կյանքի դրվագների, հերոսական գործի մանրամասների ու ֆիդայապետի գլխավորած ազգային ազատագրական շարժման կարեւորության մասին խոսելուց հետո, բանախոսը հավաքվածներին ներկայացրեց նաեւ հեղինակային «Հայդուկապետն հայոց» գիրքը՝ հույս հայտնելով, որ պատմության դասերը սերտելիս աշակերտները չեն մոռանա նաեւ իր համեստ գիրք-հուշարձանից օգտվել:

Լինել արժանի հետնորդները Մեծ Ջո-

րավարի ու թե պետք լինի՝ զենք վերցնել հայրենիքի փրկության գործի համար. բաց դասից աշակերտների քաղած դասն էր, ինչն էլ միջոցառման հիմնական նպատակն էր:



Հունվարին, փետրվարին են ծնվել ...




1919 թվականի հունվարի 20-ին, Երեւանում՝ Վանից գաղթած ընտանիքում է ծնվել բանաստեղծուհի, հասարակական գործիչ, հրապարակախոս, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Սիլվա Կապուտիկյանը**: Սովորել է Երևանի Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցում: 13 տարեկանում գրել է իր առաջին բանաստեղծությունը, որը տպագրվել է «Պիոներ կանչ» թերթում: 1936 թվա-

կանին ընդունվել է 1941-ին ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, 1950-ին՝ Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի բարձրագույն դասընթացները: 1944 թ-ին հրատարակել է «Երկու զրույց», 1945 թ-ին՝ «Օրերի հետ» բանաստեղծությունների ժողովածուները: Նրա պոեզիայի գլխավոր թեմաներն են հայրենիքը և սերը: Իր ժողովածուներում եւ «Ստորոներ ճանապարհի կեսին» (1961 թ.) պոեմում անդրադարձել է հայ ժողովրդի սխրանքներով ու ողբերգություններով լի ճակատագրին, մտորել նրա ներկայի ու գալիքի մասին: Կապուտիկյանի և՛ պոեզիայում, և՛ հրապարակախոսական գործերում Հայաստանը հայ ժողովրդի հարատև գոյության խորհրդանշանն է:

Կապուտիկյանին մշտապես հուզել են ժամանակաշրջանի հրատապ ու կարևոր հարցերը: Հրապարակախոսական երկերում արտացոլել է արցախահայության ազատագրական պայքարը, հայ ժողովրդի ինքնորոշման ու անկախության խնդիրները («Իմ ժամանակը: Հրապարակագրություն և ուղեգրություն», 1979 թ., «Էջեր փակ գորոցներից», 1997 թ., «Երջին գանգը», 2006 թ.):

Կապուտիկյանը հրատարակել է նաև մանկական բանաստեղծություններ, որոնք ամփոփել է «Փոքրի՛կ Արա, ակա՛նջ արա» (1950 թ.), «Մեր Լալիկը, սիրունիկը» (1952 թ.), «Տանը, բակում, փողոցում» (1953 թ.), «Մի տարով էլ մեծացանք» (1958 թ.), «Օաղկանոց» (1984 թ.), «Երկու թույրիկ, երկու ուլիկ» (1988 թ.) և այլ ժողովածուներում: Նրա գործերը թարգմանվել են բազմաթիվ լեզուներով:

Կապուտիկյանի անունով Երևանում կոչվել են դպրոց և փողոց, 2009 թ-ին բացվել է նրա տուն-թանգարանը:




ԽՍՀՄ-ի տարբեր երկրներում, մասնակցում էր տարբեր փա-

Լևոն Մալխասյանը ծնվել է 1945թ.-ի հունվարի 1-ին, Երևանում: «Մալխասը», ինչպես նրան անվանում են Հայաստանում, 60-ական թվականներին ստեղծում է խոնձրից: Այն ժամանակ Լևոն Մալխասյանը սովորում էր Երևանի Բոյուսովի անվան համալսարանում: Երիտասարդ դաշնակահարի ստեղծած քառյակը մասնակցում էր ռուսաճակատային երեկույթներին, համերգներ էր տալիս

ռատոնների: Վորոնեժում քառյակը ստացավ գլխավոր մրցանակը, իսկ Լևոն Մալխասյանը ճանաչվեց փառատոնի լավագույն դաշնակահար:

Լևոն Մալխասյանը եղել է կանադացի վիրտուոզ Օսկար Պիտերսոնի աշակերտը: Ելույթ է ունեցել տարբեր խմբերում, բեմ է դուրս եկել ավելի քան 40 երկրներում: Երիտասարդ տարիքին Լևոնը ջանք ու եռանդ չէր խնայում ջագ-երեկույթներ, փառատոններ կազմակերպելու համար, չնայած որ ԽՍՀՄ-ի պայմաններում նման գործունեությամբ զբաղվելը բավականին դժվար էր: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, երբ հայրենի երկիրը գտնվում էր շատ ծանր վիճակում, Մալխասը սկսում է վերականգնել «Պոպլադոկ» սրճարանը՝ վերածելով այն ջագակումբի և սկսում է կազմակերպել ջագ-փառատոններ, որոնցից մեկին ներկա էր ջագի արքա Չիկ Կորիան:

2003 թ.-ին Լևոն Մալխասյանը դառնում է Երևանի պատվավոր քաղաքացի: Հայաստանի Հանրապետության կողմից նա պարգևատրվեց «Մովսես Խորենացի» պատվավոր շքանշանով՝ հայկական մշակույթում իր կատարած ներդրումների համար: 2006 թ.-ին իրականանում է Լևոն Մալխասյանի երազանքը՝ բացվում է «Մալխաս» ջագ-ակումբը, որը ցայսօր մեծ մասսայականություն է վայելում Երևանում: Այսօր Լևոն Մալխասյանը ելույթ է ունենում «70-ականների նվագախումբ» խմբում երիտասարդ երաժիշտների հետ:



Հունվարի 27-ը հանճարեղ մատերոյի՝ մեր ժամանակների թերեւս ամենաճանաչված կոմպոզիտոր **Տիգրան Մանսուրյանի** ծննդյան օրն է:

Նա ծնվել է 1938 թվականի, Բեյրութում: 1940-ականների վերջերին ընտանիքով ներգաղթել է Հայաստան: Մանսուրյանը կոմպոզիցիա է սովորել 1956-1960-ին Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ռուսաճակատում (էդուարդ Բաղդասարյանի դասարան), ապա 1960-1965-

ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ Ղազարոս Սարյանի դասարանում, ում ղեկավարությամբ և 1967 թ. ավարտել է ասպիրանտուրան: Ուսանողական տարիներին գրել է տարբեր ժանրի երգեր, արժանացել մրցանակների:

Յեղիմակ է գլխավորաբար նվագախմբային, կամերային, երգչախմբային և վոկալ գործերի, որոնք կատարվել են ամբողջ աշխարհում: Կոմպոզիտորի ստեղծագործությունները մեծ հաջողությամբ են ընդունվում Լոնդոնում, Փարիզում, Յոնոնում, Միլանում, Վիեննայում, Մոսկվայում, Վարշավայում, Նյու-Յորքում, Լոս Անջելեսում և համաշխարհային երաժշտական այլ մայրաքաղաքներում: Մանսուրյանի ստեղծագործությունները հայկական երաժշտարվեստի և ժողովրդական ավանդույթների հետաքրքիր միախառնում են՝ իրենց լուսապայծառ, արտահայտիչ մեղեդիներով և տպավորապաշտ, բարձրաճաշակ ու ընտիր հնչերանգներով:

Գրել է նաև մի շարք ֆիլմերի երաժշտությունը, ինչպես՝ «Սենք ենք, մեր սարերը», «Ճերմակ անուրջներ», «Նռան գույներ», «Հին օրերի երգը», որոնք, հեղինակի բնորոշմամբ, «թեւ առել, թռել, իրենից հեռացել ու դարձել են ժողովրդինը»:




1924թ. հունվարի 26-ին Չանախչի (այժմ՝ Սովետաշեն) գյուղում ծնվել է բանաստեղծ, մշակութային գործիչ և գրականագետ **Պարույր Սևակը (Ղազարյան)**:

Միջնակարգ կրթություն ստանալով տեղում՝ նա 1940 թվականին ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտում է 1945թ.-ին: Նույն թվականին ընդունվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ հայոց հին գրականություն մասնագիտությամբ:

1951 թվականին Պարույր Սևակը մեկնում է Մոսկվա՝ սովորելու Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտում: Ավարտելով այն՝ նա 1957-1959 թվականներին աշխատում է նույն ինստիտուտում՝ որպես գեղարվեստական թարգմանության ամբիոնի դասախոս: Արդեն լուրջ վաստակի տեր և լայն ճանաչում ստացած Սևակը 1960 թվականին վերադառնում է Երևան: Սկսվում է գրական, գիտական ու հասարակական գործունեության արգասավոր ու բովանդակալից մի շրջան: Աշխատում է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ որպես գիտաշխատող, վարում է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարի պաշտոնը (1966-1971թթ), 1967 թվականին պաշտպանում է դիսերտացիա և ստանում բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Սովետական գրականությանը մատուցած ծառայությունների համար Պարույր Սևակը 1967 թվականին պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: 1968 թվականին նա ընտրվում է ՍՄՀՄ գերագույն սովետի դեպուտատ: Ու մինչդեռ նա իր ստեղծագործական հնարավորությունների փայլուն վերելքն էր ապրում, նրա իմաստնացած միտքը ակնկալում էր նոր թռիչքներ, մտահաղացումներ ու ծրագրեր, տեղի է ունենում ծանր ողբերգությունը՝ 1971 թվականին հունիսի 17-ին Սևակը զոհ է գնում ավտովթարին:


Նշանավոր հայ բանաստեղծ ու հասարակական գործիչ **Վահան Տերյանը** (իսկական անունը՝ Վահան Սուքիասի Տեր-Գրիգորյան) ծնվել է 1885թ. հունվարի 28-ին, Ախալքալակի Գանձա գյուղում՝ հոգևորականի ընտանիքում: 1897թ. Տերյանը մեկնում է Թիֆլիս, ուր այդ ժամանակ սովորում էին իր ավագ եղբայրները: Այնտեղ ապագա բանաստեղծը սովորում է ռուսերեն ու պատրաստվում ընդունվելու Մոսկվայի Լազարյան ճեմարան: 1906թ. ընդունվում է Մոսկվայի համալսարան, որտեղից կարճ ժամանակ հետո ձերբակալվում է հեղափոխական գործունեության համար ու նետվում Մոսկվայի Բուտիրկա բան-



տը: 1908թ. Թիֆլիսում լույս է տեսնում Տերյանի ստեղծագործությունների «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն, որը շատ ցերմ է ընդունվում թե՛ ընթերցողների, եւ թե՛ քննադատների կողմից: 1915 «Մշակ» թերթում հրատարակվում է բանաստեղծի հայրենասիրական բանաստեղծությունների «Երկիր Նաիրի» շարքը:

1917 հոկտեմբերին Տերյանը ակտիվորեն մասնակցում է բոլշևիկյան հեղափոխությանը եւ դրան հաջորդած քաղաքացիական պատերազմին: Լենինի ստորագրությամբ մանդատով մասնակցում է Բրեստի խաղաղ պայմանագրի ստորագրմանը: 1919-ին Տերյանը, լինելով Համառուսական Կենտրոնական Գործկոմի անդամ, առաջադրանք է ստանում մեկնել Թուրքեստան (այժմյան միջինասիական հանրապետություններ), սակայն ծանր հիվանդության պատճառով ստիպված է լինում մնալ Օրենբուրգում, ուր եւ վախճանվում է 1920թ. հունվարի 7-ին:

Հայ մեծագույն գրող և բանաստեղծ, հասարակական **գործիչ Հովհաննես Թումանյանը** ծնվել է 1869 թվականի փետրվարի 19-ին, Լոռվա Դսեղ գյուղում, հոգեւորականի ընտանիքում:



Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, այնուհետեւ Ջալալօղլու (այժմյան՝ Ստեփանավան) դպրոցում: 1883 թվականից շարունակել է ուսումը Թիֆլիսի Ներսիսյան ճեմարանում, սակայն նյութական ծանր իրավիճակի պատճառով 1887թ. ստիպված է լինում թողնել դպրոցը եւ սկսել աշխատել Թիֆլիսի հայ եկեղեցական դատարանում, այնուհետեւ Հայ Հրատարակչական միության գրասենյակում (մինչեւ 1893թ):

Թումանյանի գրական գործունեության ամենահայտնի շրջանն է համարվում XIX դարի վերջին տասնամյակը և XX դարի սկիզբը: Այդ ժամանակաշրջանում է, որ Թումանյանը հանդես է գալիս որպես ժողովրդի ստեղծագործական ավանդույթների վրա հիմնվող բանաստեղծ: Իր ստեղծագործություններից շատերում նա նկարագրում է նահապետական օրենքներով ապրող գյուղացիների կյանքը, որը լի է ներքին ու հաճախ ողբերգական հակասություններով: Այդ թեմային են նվիրված Թումանյանի այնպիսի պոեմները, ինչպիսիք են «Մարոն» (1887, հրատարակվել է 1892թ), «Լոռեցի Սաքոն» (1889, հրատարակվել է 1890թ), «Անուշ» ողբերգությունը (1890, հրատարակվել է 1892թ):

1899 թվականին բանաստեղծը հիմնում է «Վերնատուն» գրական խմբակը, որի անդամ են դառնում բազմաթիվ հայ նշանավոր գրողներ ու բանաստեղծներ:

XX դարի սկզբին Թումանյանը հայտնի է դառնում նաեւ որպես հասարակական գործիչ: 1905-07 թվականներին մասնակցում է Բաքվի հայ-թաթարական ընդհարումների հաշտեցմանը: Ցարական կառավարության կողմից երկու անգամ ձեռքակալվում է (1908թ. եւ 1911թ.) ու բանտ նետվում:

1912-1921թթ. Հայ գրողների կովկասյան միության նախագահն էր: Արդեն Հայաստանի խորհրդայնացումից հետո դառնում է Հայաստանի օգնության կոմիտեի նախագահ (1921-22):

Հովհաննես Թումանյանը վախճանվել է 1923 թ. մարտի 23-ին, 54 տարեկան հասակում, Մոսկվայում:

Խոսենք հայերեն

Բառագործության սխալներ

Այս բաժնում կներկայացնենք այն բառագույգերը, որոնց իմաստային տարբերակման դժվարությունը կապված է բառարմատի նույնականության հետ, ինչի պատճառով էլ դրանք շփոթում են: Բառեր կան, որ շատ հաճախակի են գործածվում, սակայն պարզվում է, որ դրանց սխալ իմաստ ենք վերագրում: Ինչպես՝ մեղանչելը, որ շատերը շփոթում են մեղա գալ կամ մեղքը քավել բառերի հետ: Այսպիսի բառագույգերը պիտի լավ ճանաչել՝ խուսափելու համար իմաստային խառնաշփոթից:

Այգաբաց-այգեբաց

Այգաբաց. կազմված է այգ՝ «վաղ առավոտ» և բաց բառարմատներից՝ միացած ա հոդակապով: Նույնն է՝ լուսաբաց, առավոտ:

Այգեբաց. Կազմված է այգի +ա+բաց, այգեբաց /ի+ա=ե/, այսինքն՝ այգու բացելը (աշնանը թաղած խաղողի այգիները զարնան օրերին ազատում են հողածածկից):

Նախադասության մտքից է երևում՝ խոսքը խաղողի այգու՞ բացելու մասին է, թե՞ լույսը բացվելու: Օրինակ՝ «Մեր գյուղում ժամանակին հասցրին այգեբացն ու էտը», «Շառագունեց աշնանային մի ցրտաշունչ այգաբաց»:

Անօրինակ-անօրինական

Իմաստային առումով իրար հետ կապ չունեն: **Անօրինակ**=օրինակը՝ նմանը չունեցող, որ կարող է անսովոր, տարօրինակ կամ բացառիկ լինել: «Անօրինակ վարքի / բնավորության/ տեր է >> = «Ոչ սովորական, անհասկանալի վարք ունի»:

Անօրինական –ը, անշուշտ, ավելի պարզ է. օրինականի հակառակն է, նույնն է՝ ապօրինի, իրավական տեսանկյունից՝ անընդունելի, մերժելի:

Ուղղենք սխալը. «Ձեր ընկերոջ անօրինական /փոխ. անօրինակ/ անձնագրություն է ցուցաբերել>>: Իսկ՝ «Ձեր ընկերոջ անօրինակ // անօրինական պահանջները մերժվեցին»>> նախադասության մեջ, նայած իմաստի, երկու բառերի գործածությունն էլ ճիշտ է. «Անօրինակ/անսովոր, անհասկանալի/ պահանջները մերժվեցին >> և «Անօրինական/ապօրինի, ոչ արդարացի, ոչ իրավական/ պահանջները մերժվեցին»>>:

Ավանդություն-ավանդույթ

Ավանդությունը-ը այլ իմաստների հետ նախկինում նաև ավանդույթ՝ սովորույթ էր նշանակում: Հիմա իմաստ ավելի սահմանափակվել է, և ամենից առաջ ավանդագրույց, պատմություն, հնից եկած, սերնդեսերունդ փոխանցված գրուցապատում ենք հասկանում:

Ավանդույթը նույնպես տարբերակված իմաստ է ստացել՝ սովորույթ, ընդունված կարգ՝ տրադիցիա օտար բառի համարժեքով: Առանձնացված նախադասության մեջ հնարավոր է երկակիություն. «Այս ավանդությունը // ավանդույթը եկել է մեր նախնիներից»>> /«այս գրույցն է եկել-հասել»>> և այս սովորույթն է եկել-փոխանցվել/:

Միայն են՝ «Մեր ժողովրդի կյանքում տնօրինելիքի ավանդությունը /փոխ. ավանդույթը /վաղ ժամանակներից է գործում», «Այդ սրբի մասին շատ ավանդույթներ /փոխ.՝ ավանդություններ/ կան»>>:

Բարդություն-բարդույթ

Բարդությունը-ը լավ գիտենք՝ դժվարություն, անհասկանալիություն, բարդ լինել



Է. Նշանակում:

Բարդույթն-ը արդեն ընկալելու մի փոքր բարդություն ունի: Սա նորակազմություն է, վերջին տարիներին ստեղծված բառ, որ դրվում է օտար կոմպլեքս-ի դիմաց: Խոսքը այն կոմպլեքս-ի մասին է, որ գործածվում է մեկի՝ իր ուժերի ու կարողությունների նկատմամբ ունեցած ներքին անվստահությունը, կաշկանդվածությունը կամ մտավախությունը մատնանշելու համար: Շատերին, օրինակ, կարող է հետապնդել անկատարության կամ անլիարժեքության բարդույթը, ղեկավար աշխատանքի անընդունակ լինելու բարդույթը և այլն: Կոմպլեքսավորված-ի դիմաց էլ պիտի գործածենք բարդույթավորված-ը:

Այսքանից հետո կարևորն այն է, որ բարդույթը չկիրառենք բարդություն-ի փոխարեն, ինչպես հետևյալում. «Հարցի լուծումը իր յուրովի բարդույթը /փոխ. բարդություն/ ուներ»>>:

/շարունակելի/

Ըստ Հենրիկ Գալստյանի «Ճիշտը եւ սխալը» գրքի /Երեւան, 2007թ./

Հետքերի փաստեր գրքերի մասին

1. 1939թ. Էռնեստ Վինսենթի գրած 50.000 բառից բաղկացած վեպում բացարձակապես գոյություն չունեն «e» տառը:

2. Շախմատի մասին ավելի քան 20.000 գիրք կա գրված:

3. Վիկտոր Հյուգոյի «Թշվառները» ստեղծագործության մեջ 823 բառից բաղկացած նախադասություն կա:

4. ԱՄՆ-ում մեկ վայրկյանում 57 գիրք է վաճառվում:

5. Լև Տոլստոյի կինը ստիպված է եղել 7 անգամ արտագրել ամուսնու գրած «Պատերազմ և խաղաղություն» գիրքը:

6. Գրամեքենայով գրված առաջին գիրքը եղել է 1875 թվականին լույս տեսած Մարկ Տվենի «Թոմ Սոյերի արկածները» գիրքը:

7. ԱՄՆ Կոնգրեսի գրադարանում 72.466.926 գիրք կա:

8. Ամենալայն գիրքը աշխարհում „The Klencke Atlas“-ն է՝ 1,75 մետր երկարությամբ և 1,90 մետր լայնությամբ: Գիրքը

շատ ծանր է և տեղափոխելու համար պետք է վեց մարդ, իսկ բացելու համար՝ երկու մարդ:

9. Աշխարհի ամենաթանկ գիրքն ունի ընդհանրապես 13 էջ, բայց դա մոտավորապես արժի 153 միլիոն եվրո: Գրքի վերնագիրն է “The Task”, որը գրել է Թոմաս Ալեքսանդր Գարդնանը:

10. Ամենահայտնի գրախանութն աշխարհում կոչվում է Shakespeare (Մանրամասն): Այն գտնվում է Փարիզում՝ Բուչարի փողոցում: Գրախանութը հայտնի դարձավ բազմաթիվ այցելուների և գրասաշրջիկների շնորհիվ:

Լրատվական գործունեություն իրականացնող **Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ**
Հասցեն՝ ք.Գյումրի, Պարույր Սևակ, 4/1
Խմբագրակազմ. **Վարդան Գրիգորյան, Անահիտ Ֆարմանյան, Աննա Մարտիկյան, Նազելի Ավետիսյան:**
Համարի պատասխանատու՝ **Լիլիթ Թովմասյան:**
Տպաքանակ՝ 200 օրինակ: Տպագրված է՝ **«Քաղաքի գրատուն» ՍՊԸ-ում:**
Տարածվում է անվճար: